

դարուն, կը վկայէ, թէ իր օրով ալ դեռ կային այդ երգերը, ու նոյնիսկ մեզի անոնցմէ նմուշ մը կուտայ:

Բայց ի՞նչ էին այդ Գողթան երգերը:

Ըսենք անմիջապէս, որ անոնք մօտ երեք քառորդ դարէ ի վեր առարկայ եղած են հայ եւ օտար բանասէրներու քննական ուսումնասիրութեանց: Նախ Մկրտիչ Էմին է եղած, որ 1850-ին ուսումնասիրած է զանոնք լոյս ընծայելով իր «Վէպը Հնոյն Հայաստանի» երկը: Հայր Յովսէփ Գաթրճեան զրազած է անոնցմով իր «Հայոց Մատենադրութեան Պատմութիւն» երկին մէջ (1851), Հայր Գարեգին Զարեհանէլեան քննած է զանոնք իր «Պատմութիւն Հայերէն Դպրութեանց» ուսումնասիրութեան մէջ (1865):

Այդ երգերուն շուրջ երկեր նուիրած են նաեւ Գրիգոր Սալաթեանց՝ «Հայոց վէպը Մովսէս Սորենացու հայոց պատմութեան մէջ», Մանուկ Աբեղեան՝ «Հայ ժողովրդական վէպը» եւայլն: Ու անկէ ի վեր «Գողթան երգեր»ը ուսումնասիրութեան նիւթ եղած են շատ մը բանասէրներու, հայ թէ օտար, որոնք բոլորն ալ ճանչցած են այդ երգերուն բացառիկ արժէքը, իրեն գրական գոհարներ:

Բայց տարբերած է բանասէրներու կարծիքը այդ երգերու էութեան մասին:

Մկրտիչ Էմին ենթադրած է, որ Գողթան երգերը մասերն են Ֆիրդուսիի «Շահնամէ»ին նման միակ դիւցազններգութեան մը: Բայց պէտք է նկատի ունենալ, որ մեզի հասած երգերը, կամ անոնք, որոնց խմատը կամ ամփոփումը կուտայ Սորենացին, կը պատմեն դարերու անջրպետով իրարմէ զատուած դէպքեր: Այսպէս՝ Աթահակ եւ Էր սերունդը կ'իյնան Քրիստոսէ 6 դար առաջ: Արգաւան Մեղացին, որ ըստ առասպելին Արտաշէսին դաւադրեց, անկէ դարեր յետոյ է:

Ֆէթթէր գերմանացին, եւ անոր հետ ուրիշ եւրոպացիներ կ'ըսեն, թէ հայ հին բանահիւսութեան այդ պատառիկները առանձին առանձին երկեր վնին, աւելի գեղօններ (պալլատ)՝ քան մեծ քերթուածներ:

Տարբեր է սակայն մեր ենթադրութիւնը:

Ըմբռնելու համար Գողթան երգերու էութիւնը՝ պէտք է փնտռել առհասարակ, թէ

ինչպէս ծագեր են արուեստի երեք մայր երակները, — վէպը, քերթուածը եւ տոաման: Ի՞նչպէս են ծագեր այս երեքը եւ ի՞նչպէս զարգացեր: Հաւաքարա՞ր թէ զատ զատ: Ու ո՞րը ամենէն առաջ:

Արուեստներու ծագումը որոնող գիտնականները տարակարծիք են այդ հարցերուն պատասխանելու համար:

Ի սկզբան տիրած է առհասարակ այն կարծիքը, թէ ժողովուրդները ամենէն առաջ թրուիչը տուած են իրենց երեւակայութեանը, հնարած են աստուածներ, դեւեր ու դիւցազուններ, շունչ եւ զօրութիւն տուած են անոնց, ու անոնցմով հիւսած տեսակ տեսակ առասպելներ: Երեւակայութիւնը, կ'ըսեն, առաջին մարդէն իսկ թեւ է առած: Առաջին մարդն իսկ սկսած է վէպ յորինել: Վէպը ուրեմն նախընթաց է ամէնուն:

Բայց ատոր հակադիր սա միւս զօրաւոր տեսութիւնը կայ: Այն, որ բանաստեղծութիւնն է արուեստի առաջին արտայայտութիւնը: Մարդը, դեռ չերեւակայած ու չիմաստասիրած, լացեր է եւ ուրախացեր: Ան ամենէն առաջ ալ պոռթկացեր է իր արցունքն ու ժպիտը: Ու արդարեւ, կ'ըսեն, բոլոր ազգերու դպրութեան, մանաւանդ անգիր դպրութեան առաջին նմուշները ոտանաւորով են: Մարդ առաջին օրէն ձեն վ՛ փնտռեր արտայայտելու համար իր ցան ու հրճուանքը: Քերթուածը ուրեմն արուեստին անդրանիկ արտայայտութիւնն է:

Ու դեռ կան պնդողները, թէ մարդիկ նախ ուզեր են զիրար զուարճացնել: Հաճոյքն է եղեր անոնց առաջին պոռթկացող բնազդը: Ուզեր են ճշալ, երգել ու պարել: Ու ձեւը, շարժումը միացուցեր է այդ բոլորը միակ արտայայտութեան մը մէջ: Մարդ առաջին անգամ ստեղծեր է եւ ոչ թէ բուն թատրոնը, այլ դոնէ թատրոնի անդրանիկ գաղափարը: Կերուխումը, գինովութիւնը իրենք են ստեղծեր տոամային առաջին կորիզը:

Բայց եթէ թատրոնը ընդունինք իրենւ միախառնութիւնը արտայայտութեան քանի մը ձեւերու մէկէն՝ բառին, պարին ու ժեսթին, դիւրին պիտի ըլլայ եզրակացնելը, թէ տոաման, ի սկզբան, տեսակ մը համադր-